30 Գիտե՞ս աղբյուր, որ բխում է

1. Գիտե՞ս աղբյուր, որ բխում է
Խաչից, որտեղ մեռավ Քրիստոս,
Գիտե՞ս Նրան, որ բուժում է
Ցավ ու վերքեր արյունահոս:

Թեև կարմիր իմ շատ մեղքեր,
Եվ լեռներից մեծ՝ հանցանքներ,
Քրիստոսի արյունը հեղվեց,
Ձյունից էլ ինձ սպիտակ արեց:

2. Հայրը ծածկեց Իր երեսը,
Երբ խաչի վրա Նա գամված էր:
Տե՛ս գլխի վրա փշե պսակը,
Իր չարչարանքն անօգուտ չէր:

3. Ես լսեցի Քրիստոսի ձայնն,
Եվ իմ կյանքը Նրանով լցվեց,
Հեղված արյունն չեղավ ունայն,
Ձյունից էլ ինձ սպիտակ արեց:

4. Հոգնած և վաստակած հոգիս
Հանգստություն երկար փնտրեց,
Եվ ինձ՝ մոլորված գառնուկիս,
Խաղաղություն Նա պարգևեց:

5. Սիրում եմ այս լուրն միշտ պատմել,
Թե Փրկիչս արյուն թափեց,
Եվ ամեն մարդկանց պարզ ասել՝
Ձյունից էլ ինձ սպիտակ արեց: